

ԱՐԱՐԵՐՆԵՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐՆՈՒՄ
(Նախքան արաբների արշավանքը Հայաստան)

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՉՅԱՆ

Ինչպես ցույց ենք տվել մեր նախորդ հոդվածում¹, արաբահայ մերձեցումները սկսվել էին արաբների կողմից Հայաստանը նվաճվելուց շատ դարեր առաջ, որոնք իրենց հետքերն են թողել հայոց լեզվի բառապաշարում: Ներկա հոդվածում ևս հիմնականում քննվում են հայերենի այն բառերը, որոնք փոխառյալ են կամ ասորա-արաբական կոյններից, կամ արաբերենից՝ արաբահայ վաղ մերձեցումների ընթացքում: Այս կարգի բառերը (փոխառությունները) համարվել են պատահական նմանություններ, ուստի կամ մերժվել են մասնագետների կողմից, կամ ուշադրության չեն արժանացել՝ արաբահայ վաղ մերձեցումների օգտին խոսող պատմական փաստերի չգոյություն պատճառով: Ներկայումս, երբ արդեն կասկած չի հարուցում արաբահայ վաղ մերձեցումների պատմական իրողություն լինելը, դրանք մեկ անգամ ևս հաստատվում են հայերենի այսպես ասած «սակեդարյան» բառապաշարում բազմիցս վկայված արաբենին փոխառություններով: Մեր նախորդ և այս հոդվածում քննած բառերը հավակնություն չունեն ներկայացնելու արաբական վաղ փոխառությունների սպառիչ ցուցակը: Դրանք անցնում են երկու հարյուրից: Անշուշտ, այդպիսիք ավելի շատ են եղել և չեն վկայվել հայ դասական մատենագրությանը: Բարբախտաբար, այս դեպքում մեզ օգնության են գալիս հայերենի բարբառները, որոնք պահպանել են գրաբարում չվկայված արաբերեն բազմաթիվ փոխառություններ: Դրանց հնարավորությունը ստուգվում է որոշ հնչյունական օրենքների օգնությամբ, որոնք գործել են միայն արաբահայ վաղ մերձեցումների ժամանակ և դադարել են դործելուց միջին դարերում: Օրինակ, ուշ արաբական

փոխառություններում արաբ. ց-ին համապատասխանում է հայ. ջ, իսկ վաղ փոխառություններում՝ գ (հազվադեպ նաև կ):

Ներկա հոդվածը նվիրված է վաղ արաբական փոխառություններից 23 բառերի քննությանը:

1. Խիլայ/խլայ սուլարգե տրված թանկագին զգեստ», խիլայել/խլայել ռնժայել թանկարժեք զգեստ»:

Խլայ բառի ամենահին գործածությունը գտնում ենք «Երգ երգոցի» հետևյալ հատվածում. «հանին յինէն խլայն իմ»², Դասական շրջանից ունենք նաև նրա բայական գործածությունը խլայել, խիլայել, խլաթել, խիլաթել ժալաթով պատվել» նշանակություններով: Բարբառներում ևս գտնում ենք առավելապես խալաթ ձևը «նվեր տրված թանկագին զգեստ, շալ» (Ալաշկերտ), ճալաթ «սենյակային բարակ երկար զգեստ» (Սուլավա), խալլաթել «թանկագին նրվեր տալ» (Մուշ) և այլն, որոնք ավելի ուշ շրջանի փոխառություններ են³, Այս բառի ծագման վերաբերյալ մասնագետների կարծիքն իրարամերժ է: Առաջին

1 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1980, № 3, էջ 49—64:

2 «Երգ երգոց», Ծ. 5.:

3 Հ. Ա. Տառյան, Հայերեն արմատական բառարան (=ՀԱԲ), 1—4, Երևան, 1971—1979, 4. 2, էջ 372, Ս. Ավագյան, Վիմական արձանագրությունների բառաքնություն, Երևան, 1978, էջ 125—127, Վերջինում նշված է, որ զգեստից բացի խիլայ էր արվում նաև կառայցը. ճալաթ և այլն:

անգամ արաբերենից փոխառված ենթադրեց Ֆ. Մարթինը⁴, որին հետևեցին Գեվորգ Դպիրը⁵, «Նոր բառգիրք հայկազյան լեզվի» հեղինակները⁶, Պ. Լադարը, քննելով ենթադրվող ասորական *xil'ā ձևը, մերժում է փոխառության այս ուղին⁷։ Լ. Հյուբշմանը այս մեկնությունը չի էլ հիշում, մինչդեռ Լ. Աճառյանն ընդհանուր արձանագրում է որպես փոխառություն՝ չավանդված ասոր. *xil'ā ձևից⁸։ Գ. Զահուկյանը, հղելով Պոկորնոն, բերում է Պետերսոնի ստուգաբանությունը՝ իբր թե խլայ հ.-ե. *khūlati- արմատից է⁹։ Ս. Ավագյանը ենթադրում է, որ այն ծագում է արաբ. ḫil'at-ից¹⁰։

Մեր կարծիքով ավելի հիմնավոր է բառիս արաբական ծագման վարկածը, քանի որ ապացուցված պիտի համարել հայ-արաբական վաղ մերձեցումների գոյությունը՝ արաբների կողմից Հայաստանը նվաճելուց մի քանի հարյուրամյակ առաջ։ Բառս բնիկ սեմական է. ակկադերենում՝ ḫalū II «մի բրդյա գգեստ»¹¹, արաբ. ḫil'a, ḫil'at¹², որոնցից էր հայերենի խիլայ/խլայ, խիլա-յն/խլայն, խալաթ, խալրաբել ձևերը։

2. Խուրթ/նուրթ, խոյթ (նաև խիթ) ձևեր, մեծ կետածուկ, խեցեմորթ, կոկորդիլոս, խոչ։

Լ. Աճառյանը այս շորս բառերը միավորել է խայթ «խայթոց, խթան» բառի հետ՝ որպես նրա մի ձայնդարձը հ.-ե. *kheil- արմատից¹³։ Գ. Զահուկյանը հնարավոր է համարում հիշյալ ձևերի առաջացումը հ.-ե. *khai-t- *(s)k(h)ai- «ծեծել, սղկել» արմատից, որոնց միացնում է նաև խեթել, խոթել, ց-խոթել (ինչպես նաև հարցականով խոց) բառերը¹⁴։ Հնդեվրոպական արմատից բը-խեցնելու այս փորձերը տեսականորեն գտնելով ճիշտ, հարկ ենք համարում հիշեցնել հնչմամբ և նշանակությամբ նման մի այլ բառի գոյությունը արաբերենում, որը և կարող է ակունք դարձած լինել հայերենի փոխառության համար, Արաբերենում ḫut-um նշանակում է «մեծ ձուկ, կետ»¹⁵, որը հայերենում գաղնում է խալթ xut' կամ հուրթ hut' թերևս նաև խոյթ xoyt'։ Սվեդիայի բարբառում խուրթ/նուրթ-ը հնչում է հաուա կամ հաուդ¹⁶։

3. Խաբս անենգություն, խաբեություն, կեղծ, խարդախություն։

Ինչպես հայանի է, հայերեն խաբ և խաբս բառերը նույնացվում են. վերջինս ենթադրվում է խաբ-ից առաջացած ձև¹⁷, դժվար բացատրելի բառավերջի ս-ի հավելումով։ Այն ավելի գործածական է ընդ խաբս ձևով՝ դասական շրջանում և խաբս ապլ՝ արդի խոսակցական լեզվում։ Հայերեն խաբ, խաբել

⁴ Լ. Աճառյան, ՂԱԲ, 2, էջ 372։

⁵ Քառասնամյա պարոկներեն... ի Գեորգեա դպրի Տեր Հովհաննեսյան Պալատցոյ, Կոստանդնուպոլիս, 1826, էջ 194։

⁶ Նոր բառգիրք հայկազյան լեզվի» (=ՆԶԲ), հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 945—946։

⁷ P. de Lagarde, Armenische Studien, Göttingen 1877, § 988.

⁸ Լ. Աճառյան, ՂԱԲ, 2, էջ 372։

⁹ Г. Б. Джаукян, Очерки истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 118, прим. 86.

¹⁰ Ս. Ավագյան, Եղվ. աշխ., էջ 125—127։

¹¹ W. von Soden, Akkadisches Handwörterbuch (=AHw), Wiesbaden, 1962 S. 314.

¹² Х. К. Баранов, Арабско-русский словарь (=АРС), М., 1962, с. 295.

¹³ Լ. Աճառյան, ՂԱԲ, 2, էջ 325, 364—365, 414։

¹⁴ Г. Б. Джаукян, Очерки..., с. 90.

¹⁵ Х. К. Баранов, АРС, с. 251.

¹⁶ Տ. Անդրեասյան, Սվեդիայի բարբառը, Երևան, 1967, էջ 247։

¹⁷ Լ. Աճառյան, ՂԱԲ, 2, էջ 309։

բառի արաբական ծագմանը անդրադարձել է Շրողերը¹⁸, որը նշված է մեր նախորդ հոդվածում¹⁹, սակայն այսօր հնարավորություն ունենք արաբերենում մատնանշել նաև ḥabasa «խաբել, ստել, խառնել, խարդախել», ḥabbas «խաբդախ, մոլորեցնող, խիստ խճճող»²⁰ բառերը, որոնք հարմար են թվում հայերեն խաբս ձևին և՛ իմաստային, և՛ հնչյունական անցումների առումով:

4. Խա «փականք, օղակ, կապ», ախել «փակել, կողպել, հողել»:

Հայերենի երկու նմանահունչ բառերի՝ Խա, ախ-ել և աղխ ստուգաբանության հարցերը շփոթվում են միմյանց հետ: Դրանց ծագման մասին առ այսօր միասնական կարծիք²¹ չկա: Հ. Աճառյանը իրավացիորեն արձանագրում է, որ նույնիսկ պարզված չէ այդ բառերի ուղղագրության հարցը. «Դրաբարում բառի ուղղագրությունը անորոշ է (աղխ, թե՛ ախ)». նոր գրականում միայն աղխ ձևը համարվում է ուղիղ²²: Մեր կարծիքով այս շփոթությունը դալիս է նախ և առաջ երկու բառերի անհարկի միավորումից, որոնք միանգամայն անկախ բառեր են և պիտի քննել առանձին-առանձին: Նախ խոսենք ախ «փականք, օղակ, կապ», ախ-ել «փակել, կողպել, հողել, միացնել» բառի մասին: Բառս ավանդված է ոսկեդարյան մատենագրությամբ, սակայն մերթ ճիշտ՝ ախ-ել, մերթ սխալ՝ ալխ-ել գրություններ: Օրինակ, Աստվածաշնչում գտնում ենք՝ «Եւ ոտք քո ոչ աղխեցաք ի շղթայս»²³, «Եւ փակեաց զդուս... և աղխեաց»²⁴, «Ի կուսական արգանդէ և յախեալ մօրէ»²⁵ (այսինքն փակ, կուսական մորից) և այլն: Բարբառներում նույնպես ախ «դռան փականք» (Ախալցխա, Համշեն, Մուշ և այլն) կամ ախիկ (Ակն), կամ ախլանք (Եվդոկիա, Սիվրի-Հիսար, Կյուրասոն, Ջենկիրլեր, Սեբաստիա և այլն), որոնք գործածում են հատկապես շղթայով փակի, շղթայով կապի» իմաստով, որից էլ ախել «դուռը կողպել, փակել շղթայով, հետագայում նաև բնդհանրապես կողպել որևէ կողպեքով (Ակն, Խարբերդ, Համշեն, Սիվրի-Հիսար և այլն) և ախլ-ել (Սեբաստիա, Ջենկիրլեր, Սիվրի-Հիսար և այլն): Նկատի առնելով ախլ-ել ձևի արտաքին նմանությունը արաբերենի ahl «ընտանիք, երբ. ahel «վրան» բառերի հետ, որոշ մասնագետներ կարծել են, որ ախլ-ել-ը և աղխ-ը «ընտանիք, ցեղ, գերդաստան, կահ-կարասի» արաբերենից են փոխառված²⁶: Մինչդեռ իսկական արաբերեն ակունքը, որից հայերեն ախ, ախ-ելն է ծագում, մնացել է անհայտ. դա է՝ aḥīla «կապ, օղակ, թակարդ, ցանց, կապանքներ, պնդօղակ և պտուտակ»²⁷, որից էլ հայերեն ախ, ախ-ել:

5. Խայրի «առաջին պտուղ, նուբար, բերք, արգասիք, արդյունք, բնծա»:

Դասական ռոջանից ավանդված այս բառի ծագումն առ այսօր մնում է անորոշ: Նրա բազմաթիվ ածանցված և բարդված ձևերը, ինչպես, օրինակ՝ երախայրիք, ախլայրի, դառնախայրի, խայրաբեր և այլն, ցույց են տալիս բառիս մեծ տարածում ունենալը հայերենում՝ մինչև արաբների կողմից Հայաստանի նվաճումը: Հ. Աճառյանը, անդրադառնալով Հյուսիսարաբիկանյանի ստուգաբանության «հին պարսկերենի խիւ և թուրք. խայր» արտահայտու-

18 Նույն տեղում:

19 ՀՍՍՀ ԳԱ «Լրագրեր», 1980, № 3, էջ 58:

20 X. K. Баранов, APC, с. 264.

21 Հ. Աճառյան, ՀԱԲ, 1, էջ 131—132, Դ. Բ. Դжаукия, Очерки..., с. 121, прим. 95.

22 Հ. Աճառյան, ՀԱԲ, 1, էջ 132: ՆԶԲ-ի հեղինակները նույնպես ուղիղ ձև են համարում աղխ-ը:

23 Բ Թագ. 34.1

24 Դատ. Գ. 25.1

25 «Եւ զհաննու իմաստասիրի խոստովանութիւն անշարժ յուսոյ», Վաղարշապատ, 1896, էջ 9:

26 Հ. Աճառյան, ՀԱԲ, 1, էջ 132:

27 X. K. Баранов, APC, с. 32.

թյանը, այն ուղղում է «իմա՝ արաբ.», ցույց տալով բառի արաբական ծագումը²⁸։ Սակայն, քանի որ Հ. Աճառյանը մտնում էր այն կարծիքին, թե հայերենում արաբերենից փոխառություններ կատարվեցին միայն արաբների՝ Հայաստան գալուց հետո, ապա հայերեն խայրի-ն արաբերեն վաղ փոխառություն չի համարում, իրականում այն ծագում է արաբերենի իսլամական «բարիք»²⁹ բառից, որը հետագայում բարբառներին հայտնի է խէր ձևով։ Բառիս հին փոխառություն լինելու ապացույցն է նաև ՝ի վերջածանցի առկայությունը նրանում, որով գոյականներ էին կերտվում մինչև V դ., ինչպես, օրինակ՝ պատասխանի, արծուի, կարի, սակայն հոգասական գրաբարի ժամանակ ՝ի-ն արդեն կորցրել էր իր կենսունակությունը և դադարել էր բառակերտ ածանց լինելուց։

6. խաթար, խաթար-ել «վնաս, ավերել, քակել, փշացնել, եղծանել, ապականել»։

Ավանդված է դասական շրջանից Աստվածաշնչում, Եվսեբիոսի Քրոնիկոնում և այլուր. օրինակ՝ «Զվարագյուրածիքսն խաթարեալս»³⁰։ Գործածվում է նաև աբխաթար «անվնաս, անքակել» ածանցված ձևը։ Բառիս ծագումը Հ. Աճառյանի ՀԱԲ-ում մտնում է անորոշ³¹։ Ս. Բուզգեն ճգնում է ապացույցել նրա «բնիկ հայերեն» լինելը. հ.-հ. *skath- (*khath-ից)³², Գ. Զահուկյանը բխեցնում է *skēth-ից³³, Հ. Աճառյանը, ելնելով արաբահայ վաղ մերձեցումների անհնարինությունից, «պատահական» է համարում արաբ. ḥaṭar «վնաս, վտանգ», որից՝ muḥāṭara «փորձանք, վտանգ», եբր. xtr «ծակել, ճեղքել» բառերի նմանությունը³⁴։ Մինչդեռ նոր ապացույցների լույսի տակ ճիշտ պիտի համարել արաբ. ḥaṭar հայ. խաթար, խաթար-ել համադրությունը։

7. խիլ, խիլ-ել «կորզել, պոկել, տեղից հանել, քանդել, հափշտակել», խիլ արկանել «մանրակրկիտ որոնել, զննել, տակնուվրա անել»։

Խիլ արմատը գտնում ենք նաև բազմաթիվ բարդություններում. ինչպես՝ արմատախիլ, դժվարախիլ, դաշտախիլ, տակախիլ և այլն, որոնք վկայում են դասական հայերենում այս բառի ամենալայն գործածության մասին։ Բառիս ծագումը ՀԱԲ-ում մտնում է անորոշ³⁵, Գ. Զահուկյանը, վկայակոչելով Մանին, առաջարկում է հայ. խիլ-ը ծագած համարել հ.-հ. *(s)kel- «կտրել» արմատից³⁶։ Հնչմամբ և իմաստով դրան շատ նման է արաբ. ḥl'a բառը՝ «հանել, խախտել, պոկել, քայքայել, հեռացնել, տեղահան անել»³⁷ նշանակություններով, որը և, հավանաբար, արաբահայ վաղ մերձեցումների ժամանակ անցել է հայերենին։

8. խառատ-ել «ոլորելով, ծամծմելով պոկուտել, փրցնել», խառատումն «քայքայում, մաշում», խառատ «տաշող հյուսն, երկաթագործ»։

Հ. Աճառյանի ՀԱԲ-ում խառատ-ել ենթադրվում է խառ «ոլորում, ոլորք» արմատից առաջացած, որի ծագումը նույնպես հայտնի չէ³⁸։ Նրան, հավանաբար, հայտնի չի եղել այս բառի գոյությունը արաբերենում, այլպայես, ինչ-

23 Հ. Աճառյան, ՀԱԲ, 2, էջ 327։

29 X. K. Баранов, APC, с. 306.

30 Ա Մակար. Դ. 38։

31 Հ. Աճառյան, ՀԱԲ, 2, էջ 311—312։

32 S. Bugge, Indogermanischen Forschungen, Strassburg, 1, S. 447.

33 Г. Б. Джаукян, Очерки..., с. 108.

34 X. K. Баранов, APC, с. 287.

35 Հ. Աճառյան, ՀԱԲ, 2, էջ 365։

36 Г. Б. Джаукян, Очерки..., с. 113.

37 X. K. Баранов, APC, с. 295.

38 Հ. Աճառյան, ՀԱԲ, 2, էջ 335։

պես մյուս դեպքերում, նա կգրեր. «Նմանությունը պատահական է»։ Արաբերենում իր, իսկ «տաշիլ, մանրել, կտրատել, կտորների վերածել» արմատից ունենք *ḥarraṭ* «խառատ» (խառատ գիտեն նաև հայերենի բաղմաթիվ բարբառներ), *ḥaraṭa* «խարտվածք, թեփ», *ḥarṭa* «պատառ, կտոր» և այլն³⁹, որոնցից էլ հայերենի խառատ, խառատ-ել և, հավանաբար, նաև խարտ-ել, խարտ-առած։

9. խարտ-ել «խարտոցով մաշել, փշրել», խարտով կամ խարտ «խարտածի փշրանք», խարտոց «տաշիլու, փշրելու, քերելու գործիք»։

ՀԱՔ-ում խարտ-ել արձանագրված է որպես փոխառություն ասորերեն *xraṭ* «մեշից կտրել, ձկնել, քերել, փորել» բառից, ուր բերված է նաև երբ. *heret* «դուր, փորագրելու գրիչ», արաբ. *ḥarraṭ* «խառատ», *ḥaraṭa* «ճախարակով հղկել, խառատել»⁴⁰, ինչպես նկատում ենք, իմաստով և հնչմամբ ավելի վստահելի է արաբերեն *ḥarṭ*-ը⁴¹։ Այսպիսով, հայերեն խառատ-ել և խարտ-ել ծագում են միևնույն *ḥarṭ* արմատից։

10. խար-ել «այրել, կիզել, դաղել», Սասնո բարբառում՝ խարվղիլ «մեշքը կրակին տալ, խարել, բռնել»։

2. Աճառյանի ՀԱԽ-ում խար բառի տակ միացված են մի քանի բառեր՝ խարոյկ (առանց բացատրելու -ոյկ-ը), որից խարուկել, խորով և խարշել (իբրև -շ- ածականով), որոնք ենթադրվում են որպես «բնիկ հայերեն բառ՝ հնիս. *qer-, qor-, qr- «այրել» արմատից»⁴², Գ. Զահուկյանը, իրավացիորեն սրանցից անջատում է խարակել, խարուկել-ը և վերոհիշյալ ձևերը բխցնում *ker- «այրել, շիկացնել, վառել» արմատից⁴³։ 2. Աճառյանը հիշատակում է նաև Շեֆթելովիցի կարծիքը խար-ը եբրայերեն *ḥārā* «այրել» ձևից փոխառյալ լինելու մասին և ավելացնելով սեմական մյուս լեզուների ձևերն էլ. ինչպես՝ ասոր. *xaurā* «հանգած ածուխ», *xarek* «այրել», *xurākā* «հրդեհ», արաբ. *ḥarr* «չեղմություն», *ḥarīq* «հրդեհ», երբ. *ḥarḥur* «այրումն, ջերմ» և այլն, հայերենի հետ դրանց նմանությունը համարում է «պատահական»⁴⁴։

Մեր կարծիքով հայերեն խար-ելը պետք է դիտել որպես վաղ սեմական փոխառություն՝ *ḥarr* «չեղմություն»⁴⁵ արմատից, որի համար հնչյունական անցումները խոշնդոտող արգելքներ չկան։

11. խարոյկ «կրակ», խարուկ-ել, խարակ-ել «այրել, թրծել, շիկացնել», (խարգել—բարբառներում)։

Ինչպես վերը նշեցինք, ՀԱՔ-ում խարակ-ել և խարուկ-ել (նաև բարբառների խարգել) ձևերը ենթադրվում են խար-ել արմատից, սակայն առանց լեզվաբանական փաստարկների։ Մինչդեռ այլ լեզվաբանների մատնացույց արած սեմական լեզուների ձևերը, որպիսիք են՝ արաբ. *ḥarīq* ասոր. *xurākā* «հրդեհ», ասոր. *xarek* «այրել» համարվում է «պատահական նմանություն»⁴⁶։ Վերոհիշյալ ձևերին ավելացնենք նաև արաբերենում գործածական *ḥarīqa*, *ḥara'iq* «խարույկ, հրդեհ», *ḥarraqa* «ուժեղ այրել», *ḥaraq* (հոգն. *ḥurūq*

39 X. K. Баранов, APC, с. 273.

40 2. Աճառյան, ՀԱՔ, 2, էջ 348—349.

41 X. K. Баранов, APC, с. 272—273.

42 2. Աճառյան, ՀԱՔ, 2, էջ 338—339.

43 Г. Б. Джаукян, Очерк..., с. 110.

44 2. Աճառյան, ՀԱՔ, 2, էջ 339.

45 X. K. Баранов, APC, с. 202—203. Սասնո բարբառում ունենք խարվղիլ «մեշքը կրակին տալ, խարել» (Վ. Պետոյան, Սասնո աղագրությունը, Երևան, 1965, էջ 481)։

46 2. Աճառյան, ՀԱՔ, 2, էջ 339.

«թրծում», həraç «այրոց, տոթ, կիզում», harīq «այրելի, վառելիք» (հմմ. հայ. խաբակել), թրծել⁴⁷, որոնք լիովին համապատասխանում են հայերենի և՛ գրական, և՛ բարբառների հայտնի ձևերի նշանակություններին: խաբակել ձևում -ոյկ-ի զոյացությունը, հավանաբար, պիտի բացատրել մակոյկ, պարոյկ և նման այլ բառերի համաբանությամբ:

12. Թափուլթ «արկղ, դադաղ, սնդուկ, տուփ»:

Բառն ավանդված է երեք գրչությամբ՝ քապուլթ, քաուլթ և քափուլթ: Հ. Աճառյանը արձանագրում է փոխառություն պարսկերեն tabut «դագաղ» բառից⁴⁸, Թեև նրան ծանոթ է եղել այս բառի արաբերեն ծագումը, որը բազմիցս մատնացույց են արել Ս. Մարթինը, Հ. Մանանդյանը, Ք. Պատկանյանը⁴⁹, սակայն Հ. Աճառյանի կարծիքով «արաբերենից, ինչ-որ կարելի չէ, որովհետև հայ բառի գործածությունը հին է»⁵⁰ (նկատի ունի քափուտ-ի արաբների՝ Հայաստան գալուց առաջ գործածված լինելու փաստը): Այն գտնում ենք նաև արամեերենում՝ tēbūtā, եբր. tēwā, tēbat «արկղ, դագաղ», արաբ. tabūt հընչմամբ, որոնք փոխառյալ են եգիպտական tbt, ibjet-ից⁵¹:

13. զոմ «գետի նեղ հուն, պատվար, գետանոց»:

Հայագիտության մեջ սխալ է որոշված ոչ միայն զոմ բառի նշանակությունը, այլև ծագումը: Այն ավանդված է դասական շրջանից. «Աշխարհացոյց»-ում, Սեբեոսի, Ղևոնդի, Ասողիկի, Արծրունու պատմություններում. օրինակ՝ «Անցանել լայնկոյս գետոյն մեծի Դրզդաթայ ընդ զոմ»⁵², «Անցին ընդ զոմն Եփրատայ»⁵³, ՆՀԲ-ի հեղինակները զոմ-ը թարգմանել են «հուն կամ կամուրջ, անցք»⁵⁴, Ք. Պատկանյանը՝ «կամուրջ», նույնացնելով հունարենի Τεθγγα «նավակամուրջ»⁵⁵ բառի հետ, որը սխալ է, քանի որ հուն. Τεθγγα-ից հայերենում սպասելի էր զեգմա, ինչ արդեն որպես տեղանուն ունենք Եփրատի գետանցում: Հ. Աճառյանն էլ, հետևելով Ք. Պատկանյանին, ընդունում է «նավակամուրջ» բացատրությունը⁵⁶: Ս. Մալխասյանցն ավելի պարզ պատկերացում տալու միտումով գրում է. «Նավակներով կաղմած ու գետի երկու ափերին պինդ կապված կամուրջ»⁵⁷, որը, սակայն, նույնպես ճիշտ չէ: Զոմ-ը ոչ թե կամուրջ է, այլ գետի ամենանեղ տեղը, որտեղից հեշտ է մյուս ափն անցնելը: Խառը, հավանաբար, հայերենին է անցել արաբերենից կամ ասորա-արաբական կոյններից, ուր գտնում ենք zamma «կապել, բանդել, ամրացնել, սանձել», zamma «աչքերի նեղ բացվածք»⁵⁸:

14. բոտոտ «որդ, ճիճու, ցեց (փայտի, փորի)»:

⁴⁷ X. K. Баранов, APC, с. 208—209. Որոշ բարբառներում, ինչպես, օրինակ, Սասնո, խաբակի նշանակում է «բոլիլ, խարկել, աղանձել», իսկ խաբուզ/կ բռնված, խարկված» (Վ. Պետոյան, նշվ. աշխ., էջ 481):

⁴⁸ Հ. Աճառյան, ՀԱԲ, 2, էջ 154, 166:

⁴⁹ Նույն տեղում, էջ 166, նաև Հ. Մանանդյան, Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934, էջ 110, К. Патканов, Материалы для армянского словаря, СПб., I, 1882, с. 9:

⁵⁰ Հ. Աճառյան, ՀԱԲ, 2, էջ 166:

⁵¹ Նույն տեղում:

⁵² «Պատմութիւն Սեբեոսի», Երևան, 1979, էջ 74:

⁵³ «Պատմութիւն Ղևոնդայ Մեծի վարդապետի հայոց», Պետերբուրգ, 1887, էջ 13:

⁵⁴ «Նոր բառգիրք հայկազյան լեզվի», Ա. Վենետիկ, 1636, էջ 741:

⁵⁵ «Թոմ վայ Արծրունու պատմութիւն», Պետերբուրգ, 1887, էջ 95:

⁵⁶ Հ. Աճառյան, ՀԱԲ, 2, էջ 104:

⁵⁷ Ս. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Կ. 2, Երևան, 1944, էջ 30:

⁵⁸ X. K. Баранов, APC, с. 418; В. Гиргас, Словарь к арабской хрестоматии в Корану, Казань, 1881, с. 405:

Բազմիցս օգտագործված է դասական շրջանի մատենագրության մեջ, նաև՝ Աստվածաշնչում. «Եւ բոառաւ, և ցեցք, և ճըճիք»⁵⁹, «Եւ ցեցակերեալք, և բոտոտակերեալ ապականին»⁶⁰, ՀԱԲ-ում թեև նշվում է բոառա բառի հետ արաբերեն *butīṭa* «ծառի որդ», *butīṭa* «որդիկ, ճճվիկ» (նվազական) ձևերի նրմանությունը, սակայն անհնար է համարվում բառիս փոխառությունը V դ., ուստի և ընդգծում է. «Բայց քստ որում հայերենի բառը շատ հին է, ուստի նմանությունը պատահական է»⁶¹: Մեր կարծիքով նմանությունը պատահական չէ, այլ արդյունք փոխառության, որ տեղի է ունեցել վաղ արաբահայ միջնադարյան ժամանակ: Այն առկա է հայերենի բազմաթիվ բարբառներում⁶² և, հսկայանալով, ունի սեմական ծագում, քանի որ ակկադերենում գտնում ենք *badād*- «մսխել, ցրել» բառը⁶³:

15. գում, զամ «գումար, գունդ, ղորք, խումբ»:

Հ. Աճառյանն անորոշ է թողնում հայերեն գում և զամ բառերի ծագման հարցը⁶⁴, որոնք օգտագործված են գում առնել «զորք հավաքել», համազում-վնսն «համախմբված, համագունդ», զամապետ «զորապետ, զնդապետ» ձևվերում: Բուզանդի մոտ գտնում ենք. «Ոմն զամապետ սպարկրացն» դարձվածքը⁶⁵: Կամ-ը ՆՀԲ-ի հեղինակները ենթադրում են թուրք. *gum* «գումար» բառից⁶⁶, որը Հ. Աճառյանը իրավացիորեն ուղղում է՝ «իմա՝ արաբ.»⁶⁷:

Ինչպես վերը նշվեց, վաղ արաբահայ զուգահեռներում հայերեն գ-ի դիմաց արաբերենն ունենում է *g*, ուստի արաբերեն *gama'a* «հավաքել, միավորել, գումարել, խումբ կազմել», *gam'* «գումար», *gamm* «բազմաթիվ, շատ, լրիվ», *gamma* «լրանալ, խմբվել, հավաքվել, լցվել»⁶⁸ ձևերի առկայությամբ անկասկած է, որ արաբ. *gam'*-ին համապատասխանում է հայերեն գամ-ը:

16. հարք-ել «խածանել, կտրել, հապավել», Արաբկիրի բարբառում՝ «ծառի ճյուղեր էտել», Կյուրասոնի բարբառում՝ «բուրդ խուզել», նաև յարդ «դարման», յարդիլ «փշրվել, կտրատվել դարմանի պես»:

Հայերենի հիշյալ բառերը ցարդ մնում են շատուգաբանված⁶⁹: ՀԱԲ-ում թեև դրանք ներկայացված են որպես առանձին բառեր⁷⁰, սակայն նման բաժանման համար թվում է հիմքեր չկան: Հարք-ել-ը հավանաբար փոխառություն է սեմական լեզուներից, հատկապես արաբերենից, ուր գտնում ենք *harda* «պատռել, պատռոտել» *hard*⁷¹, որը և կարող էր լինել հայերենի սկզբնաղբյուրը վաղ արաբահայ միջնադարյան շրջանում: Տեսականորեն չի բացառվում նաև հայերեն մեկ այլ բառի՝ յարդ-ի կապը արաբերեն *hard*-ի հետ: Հայերեն յարդ-ը, որը ծանոթ է բոլոր բարբառներին, նույնպես առ այս-

⁵⁹ Բարուք. Զ. 19.:

⁶⁰ Նույն տեղում, Զ. 11.:

⁶¹ Հ. Աճառյան, ՀԱԲ, 1, էջ 474:

⁶² Հ. Աճառյան, Գավառական բառարան, Թիֆլիս, 1912, էջ 202, Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1911, էջ 118:

⁶³ W. von Soden, AHW, S. 95.

⁶⁴ Հ. Աճառյան, ՀԱԲ, 1, էջ 589, 509:

⁶⁵ Մատթուսի Բիզանդացու Պատմություն հայոց, Թիֆլիս, 1913, էջ 364:

⁶⁶ ՆՀԲ, Ա, էջ 526:

⁶⁷ Հ. Աճառյան, ՀԱԲ, 1, էջ 509:

⁶⁸ X. K. Баранов, APC, с. 167, 170—171.

⁶⁹ Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 69, 389:

⁷⁰ Նույն տեղում:

⁷¹ X. K. Баранов, APC, с. 1083.

«որ կարուս է ստուգաբանություն⁷² և ինչպես իմաստային, այնպես էլ հնչյունական անցումների առումով արդարանում է այս ստուգաբանությունը: Հայերեն յարդ/հարդ ընկալվում է «կտրատված, բրդված», քանի որ արաբ. hard ունի «պատառոտել, կտրատել» նշանակությունները և դրանից կան բազմաթիվ ածանցյալներ՝ hardūma «կտոր, բեկորներ», hardama «շարդ, քայքայում»⁷³:

17. հրոս, հրոսակ «զինված թիկնապահ, պաշտպան, դորք» (ավանդված է նաև խրոսակ ձևով, բայական ձևն է՝ հրոսանակ (դերբ. հրոսումն, հրոսող): Ցարդ որոշված չէ հրոս բառի ծագումը: Ըստ բառարանների նրա նշանակություններն են՝ «ասպատակող զորք», «աղջիկ առևանգողի օգնական կրտսերի»⁷⁴, սակայն պիտի խոստովանել, որ դրանք շատ են մոտավոր, և հատկապես չեն արտացոլում նաև հրոս-ի ունեցած այն նշանակությունները, որոնք գտնում ենք հայոց Դատաստանապրքի կամ Կանոնագրքի հետևյալ հատվածում. «Եւ որք հրոս երթեալ էին եւ ազնականք սուտ փեսային»⁷⁵, Կասկածից վեր է, որ այս նախադասության մեջ հրոս-ն ունի «թիկնապահ, զինված պաշտպան, օգնական, զինակիր» նշանակությունները: Քննվող բառի իմաստը ճշտելուն մեծապես օգնում է նրա ստուգաբանությունը. այն ծագումով, անկասկած, արաբերենից է, ուր գտնում ենք hāris «պաշտպան, պահապան, զինակիր», hāras «պահակախումբ, թիկնապահ(ություն)», սլահապան(ություն), պաշտպան(ություն), հսկող(ություն)» բառերը, որոնք գալիս են hārās «հրս-կել, պաշտպանել, պահպանել» բաղից⁷⁶:

18. հատ «կտրելը, հատված, կտոր, հատիկ, վերջ, ծայր», հատ-անել «կտրել, կրճատել, սահմանել, պակասեցնել, փորել», հատ-ուցանել «վճարել-հանել» (նաև յատել, յօտել, հօտել):

Ցարդ անողող է բառիս ծագումը, թեև այս խնդրով զբաղվել են ոչ քիչ թվով մասնագետներ: Հատ- արմատը հիմնականում ենթադրվել է որպես հ.-ե. բառ, սակայն նույնքան հիմքեր կան նաև սեմական ակունքներից բխեցնելու համար⁷⁷: Հավանաբար, այս պատճառով է, որ Հ. Աճառյանը և Գ. Զահուկյանը նրա ծագման վերաբերյալ վերջնական պատասխան չեն տալիս: Այսպես, օրինակ, Գ. Զահուկյանը գրում է. «Ի միջի այլոց, պարզ չէ հայ. հատանել «կտրել» և խեթ. hattāi «հատել, կտրել» բառերի հարաբերությունը: Որոշ հնդկական վերականգնում են ընդհանուր հ.-ե. արմատ, մյուսները հայերեն բառը համարում են փոխառություն»⁷⁸: Հ. Աճառյանը «պատահական» է համարում հատ-ի նմանությունը արաբերենի ahad «մեկ», had «իսկույն կտրել» և hadd «ամբողջապես կտրել» բառերի հետ⁷⁹: Այս մերժումը քանի որ հիմնավոր պատճառաբանությունից զուրկ է, ուստի ենթադրում ենք, որ այն դարձյալ հիմնված է եղել ժամանակագրական նկատառումների վրա: Մեզ միանգամայն հիմնավոր է թվում հայերեն հատ- արմատի կապը արաբերեն hadd «սուր, կտրուկ, հատուկ, hadd հոգն. hudud «սահման, եզր, ծայր, սայր», haddada «սահմանափակել, սահման դնել, սահմանել»⁸⁰ բառի հետ, մասնավանդ վերջին տարիների հետազոտությունների լույսի առկ, որոնք նոր տվյալ-

72 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 389:

73 X. K. Баранов, APC, с. 1083—1084.

74 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 136—137:

75 «Կանոնագրք հայոց», Ա, Երևան, 1964, էջ 439, նաև՝ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, Երևան, 1975, էջ 114:

76 X. K. Баранов, APC, с. 208.

77 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 50—52, 386.

78 Г. Б. Джаукян, Очерки..., с. 239.

79 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 52:

80 X. K. Баранов, APC, с. 197—198.

ներով լրացնում են այս տեսակետը: Այսպես՝ դեռևս Աստվածաշնչում ունենք հատ բառի գործածությունը «սահման» իմաստով. «Հատ հատաւ ի հիւսիսոյ»⁸¹, որն ավելի հաճախակի է հանդիպում միջնադարյան հայ վիճագրության մեջ. օրինակ՝ «Այգին վերին հատովն», «Տանծի հող իւր Դ հատովն», «Հողգերն. իւր Դ հատովն եւ թմբերով» և այլն: Իմաստային այս առումներն ավելի հիմնավոր են դարձնում հայ. հատ-ի կապը արաբ. hadd-ի հետ՝ և դրանից փոխառյալ լինելու վարկածը, մասնավոր որ այն վկայված է նաև ակկադերենում՝ hadād-II «խոռ կտրել», նաև՝ haṭat-I. Միջին եբր., արամ., արաբ. hft «պեղել, փորել»⁸² ձևերը ապացուցում են բառիս սեմական ծագումը:

19. շտաւն/շաւառն «ուղտ»:

Բառիս ծագումն առ այսօր անհայտ է: Այն հանդիպում է Հ. Ոսկերեքանի Փիլիպպեցիներին ուղղված թղթի մեկնության մեջ շաւառունս ձևով (հոգն. հայց.), այլ ձևադրերում՝ շաւառնունս⁸³, Ակնհայտ է նրա նմանությունը արաբերենի šārīf «ծեր ուղտ»⁸⁴ բառի հետ, որից և, հավանաբար, կատարվել է փոխառությունը: Ինչպես հայտնի է, ուղտը Հայաստանի կենդանական աշխարհին հատուկ կենդանիներից չէ. ուստի ուղտ նշանակող այլ բառերի հետ, որպիսիք են՝ կոզեռն/կոզոն, «ուտղի ձագ», ուղտ (<ակկադ. urdu-ից) շաւառն-շաւառն էլ փոխառյալ պիտի լինի որևէ հարևան լեզվից: Հետևաբար, հենց արաբ. šārīf-ից էլ առաջացել է հայերենի շաւառ-ը, որ հետո դրափոխվելով դարձել է շաւառն:

20. շարիատ «տոկոս, հավելում, վաշխ», միջին հայերենում նաև՝ շաւ-յատ, շաւետ:

Այս բառի ամենահին գործածությունը գտնում ենք Աստվածաշնչում. «Մի տացես եղբոր քում արծաթ վաշխի և մի զկերակուր շարիատի»⁸⁵, «Նւ զկերակուր քո մի տացես ընդ նմա շարիատի»⁸⁷: Միջին դարերի վիճական արձանագրություններում շարյատ-ը կամ շաւետ-ը գործածվում է որպես տուրքի շափ, վաճ, հարկի տեսակ, իսկ Շիրակում գործածական շաւատ-ը աղացված ցորենի համար տրվող բնավարձի (ցորենով վճարի) անվանումն է⁸⁸: Ցարդ ուղղված չէ շարիատ բառի ծագումը, թեև կան մի շարք առաջարկներ: ՆՀԲ-ի հեղինակները ենթադրում են եբր. šērīt «մնացորդ», Ն. Մառը արաբ. šārī'at «օրենք», իսկ Հյունքյարպեյնսյանը՝ ašrad «տասնորդ» բառից⁸⁹, որոնք թեև հնչմամբ մոտ են հայերենին, սակայն իմաստներով չեն համընկնում: Բայց և այնպես բառիս —ատ վերջավորությունը հուշում է նրա սեմական, ավելի ճիշտ՝ արաբական ծագումը: Իսկապես արաբերենում գտնում ենք šarīyat բառի երկու նշանակությունները՝ «առուծախ, գնված իր» և «գործարք», որը ծագում է šarā «գնել, վաճառել» բառից⁹⁰: Հայերենը պահպանել է այս վերջին՝ «գործարք» իմաստը, որը նաև «օգուտ, շահ, տոկոս, հավելում» նշանակություններն է ստացել իմաստի հետագա զարգացմամբ: Այսպիսով, արաբ. šarīyat = հայ. շարիատ, շարյատ, շաւետ, շաւատ:

81 Երեմ. ԽԶ. 20.

82 Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 187—188.

83 W. von Soden, AHw, S. 306, 335.

84 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 497.

85 X. K. Баранов, APC, с. 504; В. Гиргас, նշվ. աշխ., էջ 405.

86 Բ Օր. ԻԳ. 19—20.

87 Ղևո. ԻԵ. 38.

88 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 503—504, Ս. Ավագյան, նշվ. աշխ., էջ 38:

89 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 503—504.

90 X. K. Баранов, APC, с. 61.

21. սարտ-նում ժխտելի, փախելի, բաժանվելի, հեռանալ»:

Բառիս ամենահին գործածությունը գտնում ենք Աստվածաշնչում. «Սարտիս ի նմանէ հարճն իւր»⁹¹, «Որպէս մանուկ նստուցեալ է ի ստենէ մօր իւրոյ»⁹², 2. Աճառյանը թեև նկատել է այս բառի նմանությունը սեմական ձևերի հետ (ինչպես, օրինակ՝ եբր. *srd*, ասոր. *srd*, արաբ. *šrd* «վախենալ, փախել»), սակայն արձանագրել է. «Նմանությունը պատահական է»⁹³. Հավանաբար, նկատի ունենալով դրա արաբական արշավանքներից առաջ հայ դասական գրականության մեջ գործածված լինելու փաստը՝ Թերևս կարելի էր ենթադրել եբրայերենից կամ ասորերենից (ասորա-արաբական կոյններից) փոխառված լինելը, որոնք արաբերենի *šurud*-ի կողքին ունեին *s*-ով տարբերակը: Արաբերենի *šurud*-ից է հայ. շրտ-նուլ-ը, որի մասին խոսվել է նախորդ գլուխում⁹⁴, Բանի որ արաբերենում նկատվում է *s/š* անցումը, ինչպես՝ *salgam/šalgam* «շողգամ», *siryal/širyal* «շալվար» *satrang/satrang* «շախմատ»⁹⁵, ուստի միանգամայն հնարավոր է ենթադրել հայերեն շրտ-նուլ-ը *šurud*-ից, սարտ-նուլ-ը՝ *surūd* փոփոխակից:

22. հագագ շունչ, վանկ, արտաշնչում, աղմուկ, շնչեղացում, շնչափող»:
2. Աճառյանը, խոսելով հագագ բառի մասին, թուուցիկ նկատում է, որ այն կրկնված է «պարզ հագ արմատից, որ առանձին չէ գործածված», բայց թե այս հագ-ը հնդեվրոպական ծագում ունի, թե՞ այլ չի նշում⁹⁶: Այնուամենայնիվ, բերում է Տերվիշյանի մտավախությունը հագագ-ի նաև հեգեղ-ի «սեմական ծնունդ լինելու հնարավորության վերաբերյալ»⁹⁷, իսկապես արաբերենում ունենք՝ *agğag* «աղմկալի, փոթորկալի, բուռն» *agīg* «աղմուկ, շունչ, կանչ, մոնոնոց», *agga* «աղմկել, շաշել, գոռալ»⁹⁸, որ կարող էր լինել հայերեն հագագ-ի նախատիպը: Ինչպես նշել ենք, վաղ արաբական զուգահեռներում և ասորա-արաբական կոյններից կատարված փոխառություններում արաբ. *ğ*-ի դիմաց հայերենն ունենում է գ. ինչպես, օրինակ՝ *gizzat* «գզաթ», *gurn* «գուռն», *šalgam* «շողգամ», իսկ միջին հայերենում՝ միայն ջ, օրինակ՝ *ħarag* «խարջ», *gāhil* «ջահել», *gīhaz* «ջհեղ» և այլն:

23. այռ հա, այդպես է»:

Դասական մատենագրությամբ ավանդված այս բառը չունի հիմնավորված ստուգաբանություն, թեև ՀԱԲ-ում արձանագրված է որպես բնաձայնական բառ՝ առանց արմատի հղման⁹⁹: Հենվելով Ա. Մեյերի կարծիքի վրա, 2. Աճառյանը արձանագրում է. «Ջարմանալի է, որ այսպիսի մի բառ, որ մեր արդի լեզվի ամենասովորական մի ձևն է, գոյություն չունի որչափ միայն ընդհանուր հնդեվրոպական նախալեզվի մեջ, այլև հունարենում և լատիներենում»¹⁰⁰:

91 Դատ. ԺԲ. 2.:

92 Սաղմ. ՃԼ. 2.:

93 Հ. Աճառյան, ՀԱԲ, 4, էջ 192:

94 ՀՄՄ ԳԱ «Լրաբեր», 1980, № 3, էջ 62:

95 X. K. Баранов, APC, с. 459, 521, 447, 506, 448, 508.

96 Հ. Աճառյան, ՀԱԲ, 3, էջ 3:

97 Նույն տեղում, էջ 3: Գ. Զահուկյանը ենթադրում է հ.-ե. *eg- «փչել, շնչել» արմատից (տե՛ս Г. Б. Джаукян, Очерк..., с. 240).

98 X. K. Баранов, APC, с. 634.

99 Հ. Աճառյան, ՀԱԲ, 1, էջ 170—171:

100 Նույն տեղում, էջ 170:

Հնդհանրապես ճիշտ համարելով այդ-ի բնաձայնական ծագման վարկածը, մատնանշում ենք սեմական լեզուներից արաբ. *ajla*, *qat*. *haio* «այո»¹⁰¹ ձև-վերի գոյությունը նույնպես:

АРАБСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ (до нашествия арабов в Армению)

ՈՐՏԵՍ ՄԿՐՏՉԻԱՆ

Резюме

Арабизмы в армянском языке, заимствованные в период ранних армяно-арабских контактов, до завоевания Армении арабами в VII в. относятся в основном к лексике классического грабара (V—VII вв.).

В «Этимологическом корневом словаре армянского языка» Р. Ачаряна происхождение некоторых из них не установлено, а сходство большей их части с арабскими параллелями констатировано как «случайное» из-за игнорирования возможности ранних арабо-армянских контактов и воздействия сирийско-арабского койнэ. Рассматриваются 23 слова: *խիւայ/խիւյ-ել*, *խութ/հութ*, *խոյթ*, *խարս*, *ախ*, *խաչր*, *խաթար-ել*, *խիլ*, *խառատ-ել*, *խարտ-ել*, *խար-ել*, *խարոյկ*, *թափութ*, *դոմ*, *բոտոա*, *գում/գամ*, *հարթ-ել*, *յարգ*, *հրոս/հրոսակ*, *հատ*, *շառան/շաւաոն*, *շարիատ*, *սարտ-նում*, *հազազ*, *այո*:

¹⁰¹ X. К. Баранов, АРС, с. 61.